

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը Ե Ր

Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան տօնին առ-
քիւ Գեր. Տեղապահ Հայրաւորքը հետեւեալ
օնորհաւորական հեռագիրը ուղղեց Ամենայն
Հայոց Վեհ. Հայրապետ՝ Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Գեորգ Աբգղայնի կաթողիկոսին .

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ
ՎԵՀ. Տ. Տ. ԳԵՈՐԳ Չ.

Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին (Հայաստան)

Ձերդ Ս. Օծութեան կը ներկայացնենք
մեր սրտագին շնորհաւորութիւնները Նոր
Տարւոյ եւ Ս. Ծննդեան տօնին առթիւ ,
մաղթելով Ձերդ Ս. Օծութեան երկար եւ
երջանիկ կեանք եւ Հայց. Առաք. Մայր
Եկեղեցիին եւ սիրեցեալ Հայրենիքին բար-
գաւաճութիւն :

ՏԵՂԱՊԱՀ ԱՌԱՔ. Ս. ԱԹՈՌՈՅ
ԵՂԻՇԷ՛ ՎԱՐԴԱՊԵՏ

30 Դեկտ. 1950
Ս. Աթոռ, Երուսաղէմ

Նոյն առիթով հետեւեալ հեռագիրը ուղ-
ղուած է Ս. Աթոռոյս Բարեբաւ Նորին Վսե-
մուրիւն Գալուստ Պէյ Կիւլպէնկեանին .

ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ԳԱՆՈՒՍՏ ՊԷՅ
ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

Լիզպոն

Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան տօնին
առթիւ Ձերդ Վսեմութեան կը ներկայա-
ցնենք մեր ջերմագին շնորհաւորութիւն-
ները, մաղթելով Ձեզ երկար, երջանիկ եւ
բարգաւաճ կեանք :

ՏԵՂԱՊԱՀ ԱՌԱՔ. Ս. ԱԹՈՌՈՅ
ԵՂԻՇԷ՛ ՎԱՐԴԱՊԵՏ

30 Դեկտ. 1950
Ս. Աթոռ, Երուսաղէմ

Իրաքի Մայր Թագուհիին ցաւալի ման-
ուան առքիւ, հետեւեալ հեռագիրներու փո-
խանակութիւնը եղած է Գեր. Տեղապահ Հօր
եւ Նորին Վեհ. Ապալլա բագաւորին եւ
Իրաքի Վսեմ. Խնամակալ իօխանին միջեւ .

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ
ԱՊՏՍՈՒԼԱ Ա. ԹԱԳԱՒՈՐ

Ամման

Ճամբորդութենէ մը վերադարձիս, խոր
վիշտով լսեցի տխուր մահը Ձեր Վեհափա-
ռութեան եղբոր-որդւոյն հարսին՝ Իրաքի
Մայր Թագուհիին :

Կը փութանք Ձերդ Վեհափառութեան
ներկայացնել մեր եւ մեր Միաբանութեան
ցաւակցութիւնները :

ՏԵՂԱՊԱՀ ԱՌԱՔ. Ս. ԱԹՈՌՈՅ
ԵՂԻՇԷ՛ ՎԱՐԴԱՊԵՏ

25 Դեկտ. 1950
Ս. Աթոռ, Երուսաղէմ

Ի պատասխան ստացուած է հետեւեալ հե-
ռագիրը .

ԳԵՐ. ՏԵՂԱՊԱՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

Հրահանգուած եմ շնորհակալութիւն
յայտնել Ձեզ, Ձեր ցաւակցութեանց փո-
խարէն :

ՍԵՆԵԿԱՊԵՏ
ՀԱՇԻՄԱԿԱՆ ՊԱՆԱՏԻ

27 Դեկտ. 1950, Ամման

ՎՍԵՄ. ԽՆԱՄԱԿԱԼ ԻՇԽԱՆ ԻՐԱՔԻ

Իրաք

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը
իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ,
Ձեր քրոջ Մայր-Թագուհիի մահուան առ-
թիւ եւ երկնային խաղաղութիւն կը հայցէ
Ձեր վշտահար հոգիին համար :

ՏԵՂԱՊԱՀ ԱՌԱՔ. Ս. ԱԹՈՌՈՅ
ԵՂԻՇԷ՛ ՎԱՐԴԱՊԵՏ

27 Դեկտ. 1950
Ս. Աթոռ, Երուսաղէմ

Ի պատասխան Գեր. Տեղապահ Հայրը
ստացած է հետեւեալ հեռագիրը .

ԳԵՐԱՊԱՍՏԻԻ Տ. ԵՂԻՇԷ՛ ՎՐԴ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Տեղապահ Հայոց պատրիարքութեան
Երուսաղէմ

Հրահանգուած եմ Նորին Վսեմութիւն
Իրաքի Խնամակալ Իշխանէն, հաղորդելու
Ձերդ Գերապատուութեան իր սրտագին
շնորհակալութիւնները Ձեր ցաւակցութեանց
փոխարէն . Նորին Վսեմութիւնը կ'աղօթէ
որ Ամենակալը շնորհէ Ձեզ բարօրութիւն
եւ առողջութիւն :

ՍԵՆԵԿԱՊԵՏ
ԱՐԿՈՒՆԱԿԱՆ ՊԱՆԱՏԻ

4 Յունուար 1951, Իրաք

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵՆԵՂՆԵՐՈՑ ԿԱՐԿՆԵՐՈՒ ԶՅՑԵՂՈՒՄԸ, ՕԾՈՒՄԸ ԵՒ ԳԻՒՑԻՑԵԱՅԻՆ ԿԱՐԿՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ո. Յարութեան Տաճարի սեփականատեր, իրաւակից Հայ, Յոյն և Լատին երեք պատրիարքարաններու միջև տասնեակ մը տարիներ առաջ կատարուած համաձայնութեան մը իբրև արգիւնք, երեք պատրիարքարանները իրենց բացարձակ սեփականութիւնը եղող կարգ մը մասերուն մէջ պիտի կատարէին նորոգութիւնները: Այս համաձայնութեամբ էր որ Յոյներ վերաշինեցին 1927ի երկրաշարժէն խախտած իրենց Քաթողիկոսի գմբէթը, Լատիններ խնամեցնեցին Գողթթայի մատրան իրենց բաժինը, իսկ Հայոց պատրիարքարանը՝ մեր Ո. Լուսաւորիչ Եկեղեցին (օտարներուն ծանօթ Ս. Հեղինէ անուանակոչութեամբ):

Ո. Լուսաւորիչ նորոգութիւնները սկսան 1888 թուականին և տեւեցին քանի մը տարի, իր ժամանակին անհրաժեշտ անդրադարձումներու ընեցած են Սիրիոյնի էջերէն: Ո. Աթոռը մեծածախս զոհողութիւններով մաքրեց սոյն գեղեցիկ տաճարը դարերու ընթացքին փլված իր ձեւերէն հողէ յատակէն, փայտեայ խաչկալներէն ու բազրիկներէն, զանոնք փոխանակելով հայաբունտ մարմարեայ զոյգ կաթոլիկէ-խորաններով, երկաթեայ բազրիկներով, մաքուր սրբատաշ յատակով, նոյն ատեն անձածի մաքրութեան մը մէջ երևան բերելով Տաճարի կոստանդինեան շրջանի ամբանիստ պատերը, նմանապէս վարանուեցան դարերու հողումէն անանաշիւի դարձած բոլոր սրբանկարները, նոյն ատեն տաճանաւոր նկարիչ Պր. Մ. Աթոռներուն յանձնարարելով անոնց փոխարէն զետեղելի նոր նրկարներու գծագրութիւնը: Սոյն նկարներու պատրաստութիւնը աւարտած էր գրեթէ շարժմ մը առաջ (23 Հոկտ.): Ամբողջացուելէ յետոյ Ո. Տեղեաց իրաւակարգին յատուկ գործողութիւնները, ամբողջ շարժուման մ'ընթացքին նկարները չըրջանակուեցան ընկող շրջանակներով և ազուցուեցան Տաճարի պատերուն: Տաճարի արջկողմեան պատին վրայ ազուցուեցան նաև նորոգութեան կետեւել մարմար իշատակարանը:

Ի պատրիարհութեան Ս. Ծրուաղլմի Յ. Մետրապոլիտանի և Պոլսեցոյ, Գորգիսի Ս. Գեղեցիկ յանուց Ս. Գիօրի Լուսաւորիչի մերոյ, հանդերձ երկու նորակառոյց կարողիկէիւք եւ սրբաօջ սալաբարիւք եւ մեծաղեայ վանդակօք, արդեամբք Մերոյ Արքուոյս ի վայելումն Ազգիս Հայոց — 1940 — ՌՅԶԹ

Սոյն իշատակարանը պատրաստուած էր տարիներ առաջ և սահայն Ս. Տեղեաց իրաւակարգին յատուկ պատճառներով իր ատենին կարելի չըլլալով զետեղել, յետագուեցաւ մինչև այսօր: Այս առթիւ պէտք է յիշել որ նորոգութեան ամբողջութիւնը իր ընթացքը առած է Ս. Աթոռոյ Տ. Տ. Թորգոմ, Մետրոպ. և Կիրևիչ պատրիարքներու օրերուն խլելով երեքին ալ ջանքն ու հողածութիւնը հաւասարապէս:

Պատկերներու ներկայ զետեղումով ոչ միայն վերջնականապէս կ'ամբողջանար Տաճարին վերանորոգութիւնը այլ և Տաճարը կը հազնէք հայկականութեան աչքառու և ակնապարար իր հանդերձանքը:

Թիւով տասնեկիւը այս նկարները կը ներկայացնեն պատմական-քրիստոնէական մեծագոյն իրադարձութիւնները մեր ժողովուրդին: Անոնցմէ խոշորագոյնն ինքը կը ներկայացնեն. Լուսաւորիչ ելքը վիրապէն, Տրդատի մկրտութիւնը Ս. Լուսաւորիչէն, էջմիածնի հիմնարկումը Ս. Լուսաւորիչէն, Վարապայ Խաչին գիւտը Յովէլ և Թութիկ հցնաւորներու ձեռքով, և Խաչին գերեզարքը 629 թուականին Պարսկաստանէն և այս առթիւ անոր անցքը Հայաստանէն տարուելու համար Բիւզանդիոն, իսկ մնացեալները՝ մենանկարներն են մեր առաջին լուսաւորիչներ՝ Թագէտ և Բարթողիմէոս առաքեալներու, Ս. Սանդուխտի, Ս. Ս. Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ, Սահակ հայրապետներու, Ս. Մետրոպի, Ս. Տրդատ Թաղաւորի և Ս. Վարդանի, իսկ զոյգ խորաններու սրբապատկերներէն առաջինը կը ներկայացնէ Լուսաւորիչը՝ Աստուածամօր իր տեսիլքին մէջ պայծառացած (Լուսաւորիչ խորանին): Իսկ միւսը՝ Աստուածորդոյն Մկրտութիւնը Յովհաննէսէն (Ս. Կարապետի խորան):

Նոյեմբեր 3ին կ'ամբողջանային նկարներու զետեղումը Ս. Լուսաւորիչէն ներս, ու տասնորը շքեղ զարդարումով մը մէջ պատրաստ կ'սպասէք յաջորդ օրուան մեծահանդէս արարողութեանց:

Նոյ. 4ին յետ միջօրէի ժամը 2ին նախագահութեամբ Գեր. Տեղապան Հօր. հոգ. վարդապետ հայրեր պաշտօնական թափօրով և ժողովուրդի խուռն բազմութեամբ իջան Ս. Յարութեան Տաճար, Տաճարէն ներս մուտքը կատարուեցաւ Հրաչափառի հանդիսաւոր, ճոխազգեստ թափօրով: Որմէ ետք կատարուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին առջև ուխտի արարողութիւնը: Ապա թափօրը շրջան ընելով Տաճարի կիսախայտի թեկի Ս. Կոյսի կամարասարէն իջաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ յարակից Գիւտ Խաչի Այրմատուը, այնտեղ ևս կրկնուելէ ետք ուխտի արարողութիւնը, թափօրը բարձրացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան սունին նախատունակը:

Արարողութեանց աւարտին սկսաւ սրբանրկարներու օժուրը նախագահութեամբ Գեր. Տեղապան Հօր: Տաճարը կը յորհէր եկեղեցականներու, հաւատացեալ ժողովուրդի և ուսանողութեան խուռն բազմութեամբ ու կրօնական վերացումով լեցուն այս ամբոխումին մէջէն հազիւ կարելի կը զստնար արարողական շարժումները:

Ըստ կարգի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հետզհետէ բոլոր պատկերները ստացան իրենց օժուրը Գեր. Տեղապանէն և Միաբանութեան երէց վարդապետ հայրերէն:

Հուսկ ապա կատարելէ յետոյ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան երեկոյեան թափօ-

բը, պաշտօնական գնացքով Միարանութիւն եւ ժողովուրդ վերադարձան մայրափանք լեցուն Հայց. եկեղեցւոյ խորհուրդին հոգեպարար խընդութեամբը:

Վերջին այս երեք տարիներու ընթացքին, Ս. Տեղեաց մէջ իրաւական գետնի վրայ երկրորդ կարեւոր յաջողութիւն մըն է մեզի համար Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ նկարազարդումը, առաջինը ըլլալով երկու տարիներ առաջ մեր կողմէն կառուցուած Գեթեմանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ զաւթին արեւմտեան սրբատաշ պատը:

Նոյեմբեր 5ին Գիւտ Խաչ. — Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր, հոգ. վարդապետ հայրեր առաւուտուն պաշտօնական գնացքով իջն Ս. Յարութեան Տաճար. Գողգոթայի մատուան ուխտի այցելութենէն յետոյ՝ Առաւուտեան ժամերգութիւնը և հանդիսաւոր Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան:

Ինչպէս երէկ այսօր ևս հաւատացեալներու և ուսանողութեան խառն բազմութիւնը կը յորդէր Տաճարէն ներս:

Յետ Ս. Պատարազի Գեր. Տեղապահ Հօր նախագահութեամբ կատարուեցաւ օրուան մեծահանդէս թափօրը, խաչ ու խաչվառներով, վառեալ մամուկէներով ու նոսր զգեստաւորումով թափօրականք նախ իջան Գիւտ Խաչի այլը, ուր Աւետարանի ընթերցումէն յետոյ Գեր. Տեղապահ Հայրը բարձրացուցած կենաց խաչափայտի ճահանջան մասունքը բարձրացաւ Ս. Գերեզմանի բոլորաշէնը, ուր վառեալ մամուկէներ ի ձեռնին կ'սպասէր ուսանողութիւն և ժողովուրդ: Ս. Գերեզմանին շուրջ յետ երկրի դարձման թափօրը ուղղուեցաւ զէպի Պատանատեղին, ուր ևս կատարուեցաւ Աւետարանի ընթերցում: Ապա Քրիստոսի Ս. Գերեզմանին առջև կատարուեցաւ Աւետարանի ընթերցում և Ս. Խաչի տօնին յատուկ արարողութիւններ՝ որմէ յետոյ թափօրը Պատանատեղւոյն շրջափակէն անցնելով իջաւ դարձեալ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ուր Գեր. Տեղապահ Հայրը Ս. Խաչափայտի օրնութեամբ փակեց հանդէսը:

Արարողութեանց աւարտին Միարանութիւն և ժողովուրդ հանդիսաւոր գնացքով վերադարձան Մայրափանք:

* 1 Նոյ. Դշ. — Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արղ. Գաղանճեանի և Պր. Կարդիա Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Լուսեւրականներու պաղարին:

* 8 Նոյ. Դշ. — Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան արձակուրդով այսօր մեկնեցաւ Հալէպ:

* 12 Նոյ. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

* 17 Նոյ. Աւրբ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ:

հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պաղարեանի:

* 18 Նոյ. Եր. — Սրբազն Հրեշտակապետաց Գարեգին եւ Միխայելի առաւուտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարազը մատուցուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան: Յետ Ս. Պատարազի կատարուեցաւ Հողեհանգիտ Ս. Աթոռոյ բարերար Աղաւնի ձէվահիրճեանի և զաւակաց և եղբարց հողոյն ի հանգիստ:

* 19 Նոյ. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնատան մատուռին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան:

* 25 Նոյ. Եր. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրէն և Հայրիկ վարդապետներ, նոր քաղաքի (Երուսաղէմի) կառուածներու վերստացման խնդրով իւրայեւ մեկնեցան:

* 26 Նոյ. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան:

* 30 Նոյ. Եշ. — Այսօր, Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան արձակուրդով եգիպտոս մեկնեցաւ:

* 1 Դեկտ. Աւր. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արղ. Գաղանճեանի, ներկայ գտնուեցաւ Ն. Վ. Ապտալլա թագաւորի քաղաքս ժամանելու ընդունելութեան, Ռաուտայի զօրանոցի առջև, իսկ կէսօրուան 12ին դարձեալ Ռայուտայի մէջ տեղւոյս քաղաքապետութեան կողմէ եղած հրաւերին ներկայ գտնուեցաւ, ի պատիւ Նորին Վեհապառութեան տրուած ճաշկերոյթի սեղանին:

— Գ. մ. ժամը 3ին Հոգ. Տ. Ս. Սուրէն և Հայրիկ վարդապետներ իւրայեւն Ս. Աթոռ ժամանեցին:

* 3 Դեկտ. Կիր. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան վերնատան մեր մատուռին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

— Երեկոյեան արարողութիւնը և վաղուան տօնին նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

ՆՈՐ ՈՐԲԱՐԱԿԵՐՆԵՐ

4 Նոյեմբեր Եաբաբ Երեկոյեան ժամերգութենէն յետոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, Գեր. Տեղապահ Հայրը սքանաւոր ուրաւակութեան առիճան տուաւ Ս. Աթոռոյս ժառանգաւորաց Վարժարանի ընթացաւոր երկու սանճու՝ **Տիրացու Յակոբոս Քէշիշեանի** եւ **Տիրացու Սիմօն Ավանեանի**:

Բարեհաճ Տիրացուներ արդէն իսկ սկսած են հետեւի Ընծայարանի դասաւանդութեանց ու աստ մօտ մասնակէն պիտի ստանան նաեւ Աւագ-Սարկաւորեան առիճանը: